քում։ Երկու եղբայրական ժողովուրդների համագործակցությունը ամրապնդվել էր օսմանյան ծանր լծի դեմ համատեղ պայքարի ընթացքում և հետագա ժամանակաշրջանում։ Բուլղար ժողովուրդը առանձնահատուկ կարեկցություն դրսևորեց հազարավոր հայ տարագիրներին օգնելու և ապաստան տալու գործում 1915 թ. մեծ եղեռնի ու 1922 թ. Թուրքիայից բռնագաղթի ժամանակ։

Ներկայումս, երբ ամբողջ աշխարհի առաջադեմ հասարակայնության համերաշխությունը և կարեկցանքը արտահայտվեց հայ ժողովրդի արդար պահանջների իրականացման ու ահեղ երկրաշարժի հետևանքները վերացնելու գործում, բուլղար ժողովուրդը առաջիններից էր, որ նորից դրսևորեց իր վաղեմի բարեկամության, համերաշխության ու փոխօգնության զգացումները և նյութական ու բարոյական աջակցությունը։

Պատմ. գիտ. դոկտոր Զ. Մ. ՂԱՍԱՐՅԱՆ

ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ԶԻԱԿԵՐՊ ԱՐՁԱՆԻԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի տարածքում ապրող նախնադարյան ցեղերի տնտեսական կյանքում կարևոր տեղ է գրավել ձին, որ օգտագործվել է տարբեր բնագավառներում, այդ թվում մարտակառքերում[1] և տրանսպորտում։ Ձին օգտակար դեր է խաղացել նաև քոչվոր և կիսաքոչվոր անասնապահության ասպարեզում։

Հայաստանի տարբեր հնավայրերում, այդ թվում Քոսի ճոթերում[2], Շենդավիթում[3], վայրի և ընտանի կենդանատեսակների ոսկորների հետ հայտնաբերվել են ձիու ոսկորներ։ Նոյեմբերյանի Կարմիր գյուղի III և Աղաջանի I հազարամյակների դամբարաններից խոշոր եղջերավոր անասունների, խոզի, աղխարի և վայրի կենդանիների ոսկորների հետ հայտնաբերվել են նաև ձիու ոսկորներ։ Խոշոր եղջերավոր կենդանիների ոսկորների հետ ձիու ոսկորներ են հայտնաբերվել նաև Գառնիում, ինչպես նաև Էլարում[4]։

Հայաստանի հյուսիս-արևելյան շրջաններում, դեռ երկրորդ հազարամյակից մարտակառքերը լայն կիրառում են ունեցել։ Մարտակառքերի բրոնզաձույլ մոդելներ են գտնվել Լճաշենում և Լոռի բերդում[5]։ Նոյեմբերյան

Նկ. 1

ավանի Հարսնաքարի հողերի դամբարանադաշտից պեղումների ժամանակ հայտնաբերվել է մարտակառքի մոդելով բացառիկ սափորը[6] (նկ. 1)։ Պաշտամունքային այդ սափորը ունի ուղղանկյունաձև երկու բռնակ, որոնց հակադիր կողմերում դրվագված են մարտակառքը նետած, հաստ անուրներով լծված երկու վազող ձիեր և նրանց հետապնդող, զույգ ձիերով սլացող մարտակառքը։ Դամբարանադաշտի նյութերը վերագրվում են մ. թ. ա. XIV—X դդ.։

Ս. Ա. Եսայանի ենթադրությամբ մարտակառքերը Հայաստանում լայն կիրառում են ունեցել դեռ երկրորդ հազարամյակի վերջերից[7]։ Լճաշենի № 1 դամբանաբլրից գտնված երկձիանի կառքի բրոնզե մոդելը[8] նման է Նոյեմբերյանում հայտնաբերված մարտակառքի մոդելին։ Մարտակառքի պատկերներով

1 С. А. Есаян. Доспех Древней Армении. Ереван, 1986. с. 3.

2 Է. Խանգադյան. Հայկական լեռնաշխարհի մշակույթը մ. թ. ա. 3-րդ հազարամյակում. Երևան, 1967, էջ 40։

3 Б. Б. Пиотровский. Посещения медного века в Армении, с. 170.

4 Е. Байбуртян, Псевдонеолитические поселения в Армении, с. 40.

5 С. А. Есаян. Древняя культура племен северо-восточной Армении, табл. 10—11.

6 Ս. Ս. Զիլինգարյան. Նոյեմբերյանում հայտնաբերված մի դրվագված սափորի մասին.—«Պատմա-բանասիրական հանդես», 1968, № 2։

7 С. А. Есаян. Древняя культура..., с. 223.

8 А. А. Мартиросян, Армения в эпоху бронзы и раннего железа. Ереван, 1964, с. 139.

բրոնզե գոտի է գտնվել նաև Ախթալայում[9]։

Ինչպես նշվեց վերևում, չնայած II հազարամյակի կեսերին և վերջերին ձիերը լայնորեն կիրառվում էին ռազմական գործում, որսորդական նպատակով, անասնապահության ասպարեզում, սակայն նույն ժամանակաշրջաններում պահպանվում էին նրանց վայրի տեսակները և համարվում էին լավագույն որսատեսակ։ Այդ է վկայում Նոյեմբերյանի Հարսնաքարի հողերի դամբարանադաշտում



Նկ. 2

մեր պեղումների ժամանակ հայտնաբերված ձիերի մանրակերտ պատկերներով, որսորդական տեսարանով բրոնզե հիասքանչ գոտին[10]։ Բրոնզե գոտու պատկերներն ակնհայտորեն բովանդակում են որսի տեսարան (նկ. 2)։ Նկատելի է, որ որսորդը նետ ու աղեղով հետապնդում է վազող ձիուն, նետերից երկուսը գիպել են ձիու վզին և մեկը ձիու վզից խրվել է բերանի խոռոչը։ Նույն բրոնզե գոտու մի այլ հատվածում բովանդակված է որսորդական մի այլ պատկեր, կապված կռվկատյան աղերվացեղ եղջերուների հետ։

Ձին բոլոր մյուս վայրի և ընտանի կենդանիներից ամենագեղեցիկն է և ուժեղը, որի համար հնադարյան մարդկանց կյանքում դիտվել է որպես ուժի, զեղեցկության մարմնացում և դարձել պաշտամունքի առարկա։ Հայաստանի, այդ թվում հյուսիս-արևելյան շրջանների առանձին հնավայրերում գտնվել են կավից և բրոնզից ձուլված ձիակերպ արձանիկներ։ Ավելի վաղ, մ. թ. ա. III հազարամյակից հայտնի են ձիակերպ կավե արձանիկներ։ Դրանցից հայտնաբերվել է Նոյեմբերյան ավանից մոտ 30 կմ հեռավորության վրա, Կարմիր գյուղի վաղ բրոնզեդարյան բնակատեղիում (նկ. 3)։ Նմանակներից է Շենդավիթյան գտածոն[11]։

Ուշ բրոնզեդարյան և վաղ երկաթի ժամանակներից գտնվել են ավելի շատ բրոնզաձույլ ձիու արձանիկներ։ Վայրի և ընտանի կենդանիների բրոնզաձույլ առավել շատ արձանիկներ են գտնվել Նոյեմբերյանում, հատկապես Այրումի ավազանում։ Այրումի ավազանում՝ Հաղթանակի սովխոզից 1 կմ հեռու, Այրում կայարան տանող խճուղու վրա գտնվել են ռազմիկների, ցուլերի, առյուծների, գայլերի,



Նկ. 3

շների բրոնզաձույլ արձանիկներ[12]։ Նույն վայրից, Չորրորդ Շահլամի դամբարանադաշտից մեր պեղումների ժամանակ գտնվեցին ռազմիկի, առյուծի և շան արձանիկներ։ Դեռ ժամանակ ճանապարհաշինարարական բանվորներն ինձ պատմեցին, որ այդտեղից գտնված արձանիկների հետ եղել են նաև ձիու արձանիկներ, որոնք վաճառվել են պատահական մի մարդու՝ Թբիլիսիի պետական պատմական թանգարանին հանձնելու նպատակով։

---

9 Նույն տեղում, էջ 139։

10 Ս. Ս. Զիլինգարյան. Հարսնաքարի հողերի դամբարանադաշտը.—«Երբաբեր հասարակական գիտություններից», 1969, № 10։

11 Է. Խանզադյան. Հայկական լեռնաշխարհի մշակույթը մ. թ. ա. 3-րդ հազարամյակում, աղ. 27։

12 С. Есаян. Древняя культура..., с. 231—233.

13 Ս. Ս. Զիլինգարյան. Նոյեմբերյանում հայտնաբերված մի քանի բրոնզաձույլ արձանիկների մասին.— «Երիտասարդ գիտաշխատող», 1970։

Վերջին տարիներս գտնված ձիակերպ արձանիկները նման չեն նախորդ գտածոներին։ Վերջերս Նոյեմբերյան ավանից 1,5 կմ հյուսիս, Կողբի բերդաղի հյուսիսային հատվածում պատահականորեն գտնվեց բրոնզից ձուլված ձիու արձանիկ՝ հեծյալով։ Կողբի բերդշենի կիկլոպյան ամրոցի հյուսիսային մասում, հողածածկ պատաշարի մի փոքր հատվածում, գտանք մի դատարկ տեղ, որ վայրի կենդանիները, գուցե շները, քանդել էին և տեղը բույն սարքել։ Այնտեղ հողի հետ դուրս էին նետվել խեցեղենի մանր բեկորներ։ Մի փոքր փորելուց հետո գտնվեց արձանիկը (նկ. 4)։ Բրոնզաձույլ արձանիկը պատրաստված է

Նկ. 4

միաձույլ մեթոդով, պարզունակ եղանակով։ Ձիու երկարությունը 7 սմ է. նույնքան էլ արձանիկի բարձրությունն է։ Հեծյալով։ Հեծյալի ոտքերը վերջանում են ձիու փոքրի տակ, հարթ կտրված ազդրերով, իսկ բազուկները կտրված են ուսերի մոտից։ Խիստ անհատապես են հեծյալի գլուխը և մարմինը։ Հեծյալն ունի արտահայտված քիթ և բարձր գդակ, գուցե և սաղավարտ է պատկերված։ Սանձի փոկերը երկու կողմից ավարտվում են ձիու վզի մոտ։ Արձանիկի մոտ գտնված խեցեղենի բեկորները կարելի է վերագրել մ. թ. ա. XV—XIV դդ.։

Բրոնզաձույլ ձիու մյուս արձանիկը գտնվել է շրջանի Ոսկեվան գյուղից հյուսիս-արևելք՝ «Ոսկեվան» կոչվող հանդամասում, հողաշինարարական աշխատանքների ժամանակ։ Տրակտորի խոփը ավերել է երկու դամբարան, որոնցից մեկում գտնվել է ձիու արձանիկը (նկ. 5)։ Արձանիկի մոտ գտնված խեցեղենի բեկորների օրինակները հիշեցնում են II հազարամյակի վերջերի խեցեղենի օրինակները։ Արձանիկը ձուլված է բարձր վարպետությամբ, ճաշակով, սնամեջ եղանակով։ Նա ունի 18 սմ բարձրություն։ Ձիու իրանը պատվանդանին ամրացված է գեղեցիկ թեք գծանախշերով սնամեջ ձողիկների միջոցով։ Ձիու ոտքերը ձուլված են փոքրիկ ուղղանկյունաձև հարթակին, որը գլանաձև միջուկի միջոցով միանում է հենասյունին։ Այս հատվածում ձիու մարմինը աղատ շրջվում է իր առանցքի շուրջը։ Ձիու արձանիկը նախշազարդ սյուներով միանում է ձվաձև հարթակին, որն ա-

Նկ. 5

վարտվում է թռչնի գլուխ հիշեցնող ծայրերով։ Ոսկեվանի բրոնզաձույլ արձանիկը դեղեցկության և ուժի պաշտամունքի մարմնացում է, հավանաբար՝ երկրի լորս կողմերի սիմվոլիկ պատկերացումներով։

Նոյեմբերյանի շրջանի տարածքում ձիու պատկերներով հայտնաբերված որսորդական տեսարանով բրոնզե գոտին, ձիակերպ կավե և բրոնզաձույլ արձանիկները, մարտակառքի մոդելով սափորը ապացուցում են, որ նախնադարյան տեղաբնիկների կյանքում ձին կարևոր տեղ է գրավել անասնապահության մեջ, մարտական, որսորդական և այլ ասպարեզներում։

Ս. Ս. ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ